

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

### **Գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության պետ (30-2.1-28)**

#### **Վարչության պետը՝**

- համակարգում է հանրապետության ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունների, ագրոպարենային ոլորտի ընդհանուր իրավիճակի զարգացմանն ուղղված ծրագրային փաստաթղթերի մշակումը և մոնիթորինգի իրականացումը, հանրապետության պարենային (ապահովության) անվտանգության և աղքատության նվազեցման բնագավառներին առնչվող կանխատեսումների իրականացման, ծրագրերի, հայեցակարգերի և այլ ծրագրային փաստաթղթերի նախագծերի մշակման և մոնիթորինգի աշխատանքները, ինչպես նաև Վարչությունում տարվող աշխատանքները ծրագրերի կատարման վերաբերյալ հաշվետվությունների ամփոփման, ինչպես նաև վարչական վիճակագրական ռեգիստրի վարման ուղղությամբ (վերջինիս վարման դեպքում)։

- ղեկավարում է Նախարարության համապատասխան ստորաբաժանումների և համակարգի կառույցների կողմից ագրարային քաղաքականության և պարենային ապահովության ոլորտին առնչվող տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և առաջարկությունների մշակման գործընթացին ուղղված Վարչության կողմից տարվող աշխատանքները։

- Գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստումը, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակումը։

- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ։

#### **Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

- բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ, կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան, կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական, կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն

մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2020 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

- «Պարենային անվտանգության ապահովման մասին», «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշման, ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

**Աշխատավարձի չափը՝ 310.858 (երեք հարյուր փասը հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժին /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57. lilit.baghdasaryan@minagro.am/:

**Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված ժամանակավոր թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:**

**Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**

- գրավոր դիմում,
- անձնագրի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
  - աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
  - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
    - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 03.09.2018թ.**